ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«27» 02 2019թ.
ԴԿ570-ԱԿ-206

**Ինֆորմացիայի ազատության
կենտրոնի նախագահ
ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր կողմից 20.02.2019թ. ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված ելից 341-46 գրության՝ հայտնում եմ, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունում 2018 թվականի ընթացքում պետական և ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերից մասամբ գաղտնազերծվել է միայն ՀՀ պաշտպանության նախարարի 23.02.2008թ. N 0038 հրամանը, որը առգրավվել է քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից:

Ինչ վերաբերում է վերը նշված գաղտնազերծված հրամանի տրամադրմանը, ապա այն մերժվում է՝ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որի շրջանակներում առաջարկում ենք դիմել քրեական վարույթ իրականացնող մարմնին:

Հարգանքով՝

**ՀՀ պաշտպանության նախարարության
գլխավոր քարտուղար** **Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 44 39, ՖԱՔՍ՝ (+374 10) 66 32 34